ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԸՆԿԱԾՆԵՐԸ

Կռիւներում ընկան նրանք.
Ամէն մէկը՝ մի տան ճրագ,
Ամէն մէկը՝ մի մօր որդի,
Ամէն մէկը՝ մի աղջկայ
Երազանքը անապական,
Կնոջ՝ սէրը, հօր՝ ապագան...
Ամէն մէկը՝ անգիր մի վէպ,
Ամէն մէկը անգին մի կեանք...

Ամէն մէկը ընկան ա՛յլ կերպ.
Մերթ՝ ջրի մէջ, մերթ՝ հողի տակ,
Մէկը սրով, տասը՝ հրով,
Մէկը՝ արդէն յայտնի հերոս,
Տասը՝ հերոս դեռ չդարձած,
Մէկը՝ իր մօր արցունքներով
Թաց նամակը դեռ չընթերցած,
Տասը՝ նամակ սպասելիս,
Կարօտելիս, երազելիս...

Բայց զոհի՛ պէս չընկան նրանք։
Ընկան նրանք իբրեւ մարտի՛կ,
Ընկան նրանք իբրեւ մարտի՛կ,
Որ սովոր են մահը վանել
Իրենց կեանքով՝ յանուն կեանքի,
Որ սովոր են զրկանք տանել՝
Ընդդէմ ցաւի ու զրկանքի.
Որ պատրաստ են յանուն սիրոյ
Սիրուց առնել ատելու թափ.
Եւ անպարտ են ատելութեամբ։
Որ հզօր են հէնց այդ սիրով.
Զոհի՛ նման չընկան նրանք։
Ընկան նրանք իբրեւ մարտի՛կ,
Որ փուլ չգայ էլ ապարանք,
Խաղաղ մնայ ամէն երդիկ,
Եւ ծխանի ծուխը բարակ
Վե՛ր բարձրանայ պրա՛կ-պրա՛կ,
Քամուց թերթուի լուրթ երկնքում.
Որ էլ ոչ մի ընտանիքում
Անտերացած ոչ մի աթոռ
Ջաղաղակի դատարկութեամբ
Թէյի ժամին, ճաշի պահին.
Որ արկերի դղրդոցին
Ու հրդեհի ահեղ բոցին
Փոխարինեն արթած բահի
Զրնգոցը երկնքի տակ
Եւ կարօտի շշուկը տաք։

Նրանք ընկան կռիւներում,
Բայց ապրում է հոգին նրանց
Ապրողների հոգիներում.
Չի՛ մեղմացել ցաւը կրած,
Ատելութի՛ւնը փրփրած
Եւ յաղթութեան տենչը խորին՝
Ի գիտութիւն ա՛յն բոլորի,
Որ նայում են շիրմին նրանց
Միայն իբրեւ մի բլուրի,
Որ հարթւում է կամաց-կամաց,—
Անմիտի պէս մոռանալով,
Որ եթէ չար թշնամու դէմ
Ապրողները իրենց ուժով
Ու զէնքով են անպարտելի,
Ընկածները իրենց յուշո՛վ
Վրէժո՛վ են սարսափելի...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

1947

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՆԿԵՂԾ ԱՍԱԾ

Անկեղծ ասած՝ այս ամէնից ես յոգնել եմ,
Ես, սիրելի՛ս, որ քեզ սիրել եւ օգնել եմ.
Ձեռք եմ պարզել, յոյս եմ տուել,
Վատը դ թողած՝ լաւը դ թուել,
Հաւատացրել, հաւատացել,
Թէ իմ առաջ դուռ ես բացել՝
Ջտեսնըուած, չեղած մի դուռ։
Սակայն ի՞նչ եմ ես ստացել
Այդ ամէնին ի տրիտուր։

Անկեղծ ասած՝ ոչինչ չկայ, եւ ոչ էլ կար։

Անկեղծ ասած՝ դու բնաւ էլ այ՛ն չես եղել,
Ա՛յն չես եղել, ինչ որ ես եմ կարծել երկար։
Ո՞ւր ես, ասա՛, դու ինձ մղել։
Ճիշդ ճամբից ես միայն շեղել։
Սուտ խոստումով կապել ես ինձ,
Մանկան նման խաբել ես ինձ,
Ու չես տուել ոչի՛նչ, ոչի՛նչ։
Իսկ այն, ինչ որ ինձ ես տուել,
Արժանի չէր, ո՛չ քեզ, ո՛չ ինձ։

Անկեղծ ասած՝ քո տուածից ես յոգնել եմ։

Ինքդ գիտես՝ որքան ձգտել ու տքնել եմ,
Որ դու... որ դու նման լինես իմ երազին։
Իսկ դու գիտե՞ս՝ ի՞նչ դուրս եկաւ.
«Տղան հասաւ իր մուրազին,
Դուք էլ հասնէք ձեր մուրազին»։
Հէքիաթն, այո, միտքըս ընկաւ...
Դու՝ հէքիաթում հրաշք աղջիկ.
Այնինչ կեանքում՝ ինչ-որ... չղջիկ,
Որ ոչ թռչուն, ոչ էլ մուկ է...

Անկեղծ ասած՝ զուր էր ամբողջ այս աղմուկը։

Անկեղծ ասած՝ նեղանում ես, թէ լրջանում,
Մէ՛կ է հիմա։ Էլ չեմ գցի ինձ սար ու ձոր,
Անկեղծ կ՚ասեմ՝ հէքիաթն ինչով է վերջանում.
Ցած է ընկնում երեք խնձոր —
Մէկ՝ ասողին,
Մէկ՝ լսողին,
Մէկ էլ... ինձ պէս գիշեր ու զօր
Ցիմարաբար սպասողին...

Անկեղծ ասած՝ հէքիաթներից ես յոգնել եմ...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

1955

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՎԱՐՔ ՄԵԾԱՑ

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած.
Ծնւում են նրանք ճի՛շդ ժամանակին։
Եւ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց։

Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք.
Հասարակ հօրից ու մօրից ծնուած՝
Սերում են նրանք եւ ա՛յն վայրենուց,
Որ էլ չէ՛ր կարող ապրել քարայրում։

Սերում են նրանք եւ ա՛յն ծերուկից,
Որ նախընտրում էր քնել տակառում։
Սերում են նրանք եւ ա՛յն պատանուց,
Որ սիրահարուեց իր իսկ պատկերին։

Սերում են նրանք բոլո՛ր նրանցից,
Որ սատանային հոգին են ծախում,
Միայն թէ անե՛ն մտածածն իրենց,
Ինչ փոյթ թէ սատկեն ժամանակից շուտ։

Անվտանգ՝ ինչպէս հրդեհն արեւի,
Անվնաս՝ ինչպէս օգտակար լորտուն,
Վախ են ներշնչում պետութիւններին
Մինչեւ իսկ իրենց կամքի հակառակ։

Արքաների հետ խօսում են «դու»-ով,
Եթէ, ի հարկէ, լսում են նրանց,
Իսկ թէ չեն լսում՝ մէ՛կ է, չե՛ն լռի,
Կը խօսեն նոյնիսկ իրենց կօշկի՛ հետ։

Ով սահմանում է նոր օրէնք ու կարգ՝
Յայտարարւում է եւ օրէնքից դուրս։
Բայց չե՛ն վախենում նրանք չար մահից.
Ապրում են դժուար ու մեռնում են հեշտ...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

1961

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԲԱՐԵԽՕՍ ԵՂԻՐ ԻՄ ԵՒ ԻՄ ՄԻՋԵՒ

Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,
Անաղարտ մնամ
Ա՛յն ճահճանման աղտ-աղարտի մէջ,
Որ դժգոհութիւն բառով է կոչւում։

Դժգոհութիւնից ես շա՛տ եմ դժգոհ։
Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ,
Եւ ասեմ՝ ինչո՛վ.
Բարեխօս եղիր իմ եւ իմ միջեւ,
Որ բանն աւարտուի ինքնահաշտութեամբ։

Ես խռովել եմ նաեւ աշխարհից.
Ե՛կ ու վերստին հաշտեցրո՛ւ դու մեզ,
Թէ չէ ես այսպէս ապրել չե՛մ կարող։

Ուզում եմ նայել ինձ ու աշխարհին
Լիացա՛ծ, ժպտո՛ւն ու գո՛հ աչքերով՝
Յաղթելով ե՛ւ քաղցը, ե՛ւ պապակ փափաք։

Ուզում եմ ապրել անչար ու բարի՝
Գմբէթի ճեղքում բուսած տուղտի պէս...

Մի բու թառել է իմ զոյգ աչքերին.
Թռցրո՛ւ նրան։
Մի ձու սպիտակ ինձ բիբ է դարձել.
Կորցրո՛ւ այդ ձուն։

Ճանճեր են նստած ինձ վրայ
Այնպէս,
Ինչպէս քունջութը՝ կաթնահունց հացին։
Ճանճը քունջո՛ւթ չէ.
Հացը չի՛ ուտում։

Ճանճով է լցուած իմ ներսը նաեւ,
Ինչպէս վարսանդը՝ խաշխաշի սերմով։
Խաշխաշ չե՛մ ուզում.
Կակա՛չ դարձըրու։

Ասում են, իբրը, կապոյտի վրայ
Չեն նստում ճանճեր։
Լսո՞ւմ ես, Մարիա՛մ,
Ինձ ներս ու դրսից կապո՛յտ հագցըրու...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

1963

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՆՈՐՕՐԵԱՅ ԱՂՕԹՔ

Արդէն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ,
Շատ եմ վախենում
Բիւրաւոր ու բո՛ւթ հաւատացեալից,
Բիւրատեսք ու սո՛ւտ հաւատացեալից։
Եթէ աստուած էք՝
Փչեցէ՛ք նրանց բոլոր մոմերը,
Մարեցէ՛ք նրանց կանթեղներն ամէն,
Հանգցրէ՛ք նրանց ջահերն այլազան,
Որ... եղիցի լո՛յս։
Եւ ո՛չ մի գաւթում մի՛ ընդունեցէք
Նրանց մատաղը,
Որ իրենցը չէ, այլ գողացուած է։
Մերժեցէք նրանց զո՛հն էլ խոստացեալ,
Որ... զոհ չգնայ ինքը հաւատը՝
Մաքո՛ւր-վսեմը,
Անկե՛ղծ-անսո՛ւտը։
Ու թէ աստուած էք՝
Ամուր փակեցէք ձեր ականջնե՛րն էլ
Նրանց սողոսկուն աղօթքի դիմաց՝
Անգի՛ր-ինքնահո՛ս-հաշուեկշռուա՛ծ այն աղօթքների,
Որով խաբում են ո՛չ իրենց,
Այլ ձե՛զ։
Եւ — բաւական է — հասկացէ՛ք ընդմիշտ,
Որ աստծուն նո՛յնիսկ հայհոյողները
Շատ աւելի են գերադասելի,
Վասնզի նրանց բարկացըրել է ինքը հաւատը՝
Խոցուա՛ծ-արիւնո՛տ,
Այրուո՛ղ-ապտակուա՛ծ,
Ցաւա՛ծ-ճչացո՛ղ,
Մանո՛ւկ հաւատը,
Որ հայր դառնալու համար է ծնուել։
Ու եթէ հայր էք՝
Մի՛ թողէք,
Որ սուտ հաւատացեալներն սպանեն նրան։
— Ինչքան էլ ծանր է մանուկ թաղելը,
Մանուկ պահելը ծանր է աւելի...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

1965

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՁԱՅՆԻԻ ԵՐԿՐՈՐԴ
ԱՌ ՏԷՐ ԿԱՐԴԱՄ

Թողութիւն տուր, Տէ՛ր, ծանրը խաւարին,
Միայն թէ թող Նա թողնի հեռանայ։
Թող ծառե՛րն անգամ (առանց եւ քամու),
Յարգանքով Նրա առջեւ կեռանան,
Միայն թէ թող Նա թողնի հեռանայ։
Մենք պահանջ չունենք,
Մենք գոհ ենք նոյնիսկ,
Միայն թէ թող Նա թողնի հեռանայ։
Մենք խոստանում ենք,
Եւ մենք իսկապէ՛ս
Նրան չե՛նք կարող ու չե՛նք մոռանայ,
Միայն թէ թող Նա թողնի հեռանայ...

Իսկ թէ հարկ լինի, նամանաւանդ պէտք,
Ես խաւարի հետ կը մեկնեմ Ինքըս՝
Դառնալով Նրա թագաւորութեան
Հին Հպատակն ու նոր Քաղաքացին՝
Անդարձ կը մեկնեմ խաւարի հետ Ես,
Միայն թէ մեր այդ մեկնումից յետոյ
Ժամանի ինքը Արշալո՛յսը,
Գա՛յ,
Ու եթէ մի քիչ տխրի, որ չկամ,
Բայց մի քիչ յետոյ
Եւ ուրախանա՛յ, որ իմ կորստով
Կորել է նաեւ ինքը խաւարը...

Արշալո՛յսը գայ,
Եւ իր կտրուած պորտից պոկուելով՝
Նորածին օրը ալ-կարմիր շնչի
Եւ ինքն էլ զգայ,
Որ իր այդ շնչով խոնաւ ու տաքուկ
Այնպէ՛ս է լցուում աշխարհը կրկին,
Ինչպէս տճկորը՝ արնագոյն գինով,
Եւ այդ լցումի թրթիռը հսկայ
Մանրիկ անցնում է մեր իսկ ներքինով՝
Իբրեւ մի սարսուռ,
Որ մեզ կապում է անտես կապերով
Աստուածների հետ,
Դարձնում նրանց հետ մեզ յարաբերող,
Բայց եւ առնչում մեզ ովկիաններին,
Որոնց անվախճան ու տարուբերող
Մակընթացութիւն-տեղատրութիւնն
Այլ բան չէ արդէն,
Քան թէ աննշան մեր զարկերակի
Նշանակալից արձագանգը մեծ
Մեզնից սկսուող տարածութեան մէջ...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

1967